15) Բժշ. Վ. Արծրունի. Վարակիչ հիւանդութիւնները եւ նրանց թոյները, պատկերազարդ. (Բժշկի զրոյցներ № 3), Թիֆլիս, 1902 թ. գինն է 15 կ.։

—

Կարելի է ասել որ շատ քիչերն են մեզանում կարողանում ժողովրդի հետ այնպէս պարզ, այնպէս հետաքրքիր ձեւով խօսել գիտական հարցերի մասին, ինչպէս յարգելի հեղինակը, որ ընտրում է իր «Զրոյցների» համար միշտ ամենակարեւոր հարցեր և առանց կողմնակի շեղումների, առանց աւելորդ շատախօսութիւնների կենտրոնացնում է ընթերցողի ուշադրութիւնը բուն առարկայի վրայ։

Ներկայ գրքոյկի մէջ նա աշխատել է ժողովրդականացնել վարակման գաղափարը։ Աւելի պարզ և ամփոփ առաջաբան, վարակիչ հիւանդութիւնները հասկանալու համար, դժուար է երեւակայել։

Գաղափար տալու համար գրքի մատչելիութեան և բազմակողմանի բովանդակութեան մասին՝ մենք առաջ կը բերենք բոլոր գլուխների վերնագիրները.

Վարակիչ հիւանդութիւնները ինչպէս են սկսւում ու տարածւում.—Վարակիչ հիւանդութիւնների պատճառը.—Ինչից են բաղկացած միկրոբները.—Ո՞րտեղ են ապրում բակտերիաները.—բակտերիաների կեանքը.—Ի՞նչպէս են բազմանում բակտերիաները.—Բակտերիաների կատարած հրաշքները.—Վնասակար կամ հիւանդաբեր բակտերիաները.—Ի՞նչպէս են մտնում մեր մէջ այդ սարսափելի թշնամիները և հիւանդացնում մեզ.—Ի՞նչն է ոչնչացնում բակտերիաներին.—Ի՞նչ է դառնում մանրիկը, երբ ներս է մտնում մեր թոքերը, ստամոքսը կամ վէրքերի մէջ.—Ի՞նչպէս են բակտերիաները հիւանդացնում ու մահացնում մարդկանց.—Ի՞նչպէս պէտք է կռուել վարակման դէմ.—Ի՞նչ է անում կառավարութիւնը վարակիչ հիւանդութիւնների դէմ.—Ի՞նչ պէտք է անենք, երբ հիւանդութիւնը տուն է ընկել.—Ի՞նչ պէտք է անել, եթէ հիւանդանոց չկայ.—Ի՞նչ է ախտահանութիւնը և ինչպէս պէտք է ախտահանել հիւանդի սենեակը և միջի իրեղէնները.—Ի՞նչպէս պէտք է խնամել հիւանդին։

Ցանկալի է որ, մանաւանդ մեր գիւղերում, ամենալայն տարածում ստանայ այս գրքոյկը։ Ժողովրդական խաւերին մօտ կանգնած ամեն մի հասկացող մարդ պէտք է յանձնարարի այս գրքոյկի ընթերցումը։

Լ. Ս.

—